ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 4 դեկտեմբերի 2018թ. ժամը 14:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Գևորգ Հովհաննիսյան

Անդամներ Գեղամ Գևորգյան

Անահիտ Հովհաննիսյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ջեռուցման համակարգի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 600 000 ՀՀ դրամ, ինչպես նաև չափաբաժիններից յուրաքանչյուրի նախահաշվային գինը, որը «գազի կաթսա» չափաբաժնի համար կազմում էր 320 000 ՀՀ դրամ, իսկ «ռադիատորներ» չափաբաժնի համար՝ 280 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանը (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 66ա շենք, բն. 55, էլ՝ փոստ՝ amnorog@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը, ծանոթանալով գնային առաջարկին, հայտարարեցեց, որ մասնակիցն առաջարկում է պայմանագիրը կատարել 562 500 ՀՀ դրամ ընդհանուր գնով, այդ թվում՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 290 500, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 272 000 ՀՀ դրամ գներով:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանի հետ կնքել ջեռուցման համակարգի մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Գևորգ Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ _____ Գեղամ Գևորգյան

_____ Անահիտ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան